Մամլո հաղորդագրություն
Անհապաղ հրապարակման համար
Դեկտեմբերի 11, 2023թ.

Ucom և Smartcom ընկերությունները ՔՈԱՖ Սմարթ կենտրոնի երեխաներին նվիրել են խելացի ժամացույցներ և uKid հավելվածից անվճար օգտվելու հնարավորություն

Փայլում են երեխաների աչքերը. ուրախ է և Ucom-ի թիմը. այսօր նրանք գլխավոր տնօրեն Ռալֆ Ցիրիկյանի ուղեկցությամբ այցելել էին «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (ՔՈԱՖ-COAF) Լոռու Սմարթ կենտրոն և հանձնել երեխաների ցանկալի նվերը: ՔՈԱՖ-ի շահառու 55 երեխաներ այսօր ստացան խելացի ժամացույցներ, որը նրանց համար պատրաստել էին Ucom-ի աշխատակազմն ու Smartcom ընկերությունը: Նպատակը երեխաների ապահով ու անվտանգ տեխնոլոգիական ինտեգրումն էր:

«Մենք խրախուսում և օժանդակում ենք մանուկների հասանելիությունը տեխնոլոգիական նորարարություններին: Խելացի ժամացույցները լուծում են ոչ միայն երեխաների զարգացման ու հասանելիության հարցը, այլ նաև ապահովում են ծնողի ու երեխայի միջև կապը, որով լուծվում է նաև երեխայի անվտանգության հարցը»,- նշել է Ucom ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Ցիրիկյանը:

Կապի ազգային օպերատորը խելացի ժամացույցներում տեղադրել է uKid հավելվածը, որը հնարավորություն է տալիս ծնողին սմարթֆոնի միջոցով հետևել երեխայի տեղաշարժին: Ucom ընկերությունը տրամադրել է SIM քարտեր՝ uKid սակագնային պլանով, որից երեխաները կարողանալու են անվճար օգտվել մեկ տարի շարունակ:

«Մանկական զարգացման ծառայությունների շրջանակում մեր շրջանավարտները, որոնք 3-5 տարեկանում օգտվել են մեր սոցիալ-հոգեբանական և կրթական աջակցության ծրագրերից, ստացան ժամացույցներ որպես նվեր Ucom և Smartcom ընկերությունների կողմից: Դա երեխաներին հնարավորություն է տալու օգտվել բարձր տեխնոլոգիաներից ավելի ապահով, իսկ ծնողներին՝ լինել ավելի հանգիստ»,- նշել է ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն Լիանա Ղալբաղչյանը:

Նշենք, որ այցի շրջանակում Ռալֆ Ցիրիկյանը շրջայց է կատարել Սմարթ կենտրոնում, ծանոթացել երեխաների հետ, զրուցել կենտրոնի հնավորությունների և մատուցվող ծառայությունների մասին:

***

Ucom-ը մատուցում է ամենաարագ ֆիքսված և շարժական կապի ծառայությունները Հայաստանում: Բացարձակ առաջատար է *IPTV* և ֆիքսված ինտերնետի ծառայությունների մատուցման ոլորտում, ինչպես նաև զբաղեցնում է գլխավոր դիրքերը շարժական ինտերնետի հայկական շուկայում: Միջազգային լավագույն չափանիշներին համապատասխանող արդիականացված *4G+* և սեփական օպտիկամանրաթելային ցանցերի միջոցով *Ucom*-ը տրամադրում է ֆիքսված և շարժական կապի ծառայությունների ամբողջական փաթեթ ավելի քան *700* հազար բաժանորդների:

ՔՈԱՖ-ը հիմնադրվել է *2004* թվականին: Տնտեսական և ենթակառուցվածքային նախաձեռնությունների հետ մեկտեղ, Հայաստանի և Արցախի *82*

coaf.org
coaf@coaf.org
+374 10 502076

գյուղական համայնքների տրամադրելով կրթական, առողջապահական, սոցիալական ծառայությունների ու մասնագիտական աճի ռեսուրսներ՝ ՔՈԱՖ-ն աշխատում է Հայաստանի գյուղերում կյանքն էականորեն բարելավելու ուղղությամբ: Մինչ օրս նորարար ծրագրերն ու ենթակառուցվածքային նախագծերն իրենց դրական ազդեցությունն են ունեցել *6* մարզի ավելի քան *107,000* բնակչի կյանքի որակի վրա:

ՔՈԱՖ-ի հաղորդակցության բաժնի ղեկավար
Նանա Մարդոյան
Էլ. հասցե՝ nana.mardoyan@coaf.org
Բջջ.՝ +374 55 003 723